

Հաստատված է  
ՀՀ Սյունիքի մարզի  
Քաջարան համայնքի ավագանու  
11 փետրվարի 2025  
թվականի N 05-Ա որոշմամբ

**ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ  
ՄԱՔՐՄԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ**

(2025-2029թթ.)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԳԼՈՒԽ 1. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

|  |    |
|--|----|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....                                      | 3  |
| 1. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵՍԼԱԿԱՆ ..... | 4  |
| 2. ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....                 | 6  |
| 3. ԹԱՓՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ .....            | 8  |
| 5. ԻՐԱՋԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ .....                       | 14 |
| 6. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՅՈՒՋԵ .....                       | 17 |
| 7. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ և ԳՆԱՀԱՏՈՒՄ.....                      | 21 |

## ԳԼՈՒԽ 2 ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

|  |    |
|--|----|
| 1. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱԴՐՈՒՅԹՆԵՐ .....                | 22 |
| 2. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԹԻՐԱԽՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ .....                | 24 |
| 3. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ , ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ..... | 30 |
| 4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ և ԲՅՈՒՋԵ .....                          | 31 |
| 5. ԹԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐ.....                        | 34 |

# ԳԼՈՒԽ 1.

## ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

### Ներածություն

#### Աղյուսակ 1

|  |  |
|--|--|
| Պլանի անվանում                                     | ՀՀ Քաջարան համայնքի Աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2025-2029թթ. պլան   |
| Պլանավորման մեջ ընդգրկված համայնք, բնակավայր       | Քաջարան համայնքի 21 բնակավայրեր  |
| Պլանավորման ժամանակաշրջան                          | 2025-2029թթ  |
| Ներկայացվող Պլանի նախատեսված վերանայման ամսաթվերը  | 2026թ. նոյեմբեր, 2027թ. նոյեմբեր<br>2028թ. նոյեմբեր  |
| Պլանը կազմող անձանց անուն, ազգանուն, պաշտոն        | Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի բնապահպանության, գյուղատնտեսության և տնտեսական զարգացման ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ՝ Վարսենիկ Մկրտչյան |
| Պլանը կազմող անձանց էլ. հասցե և հեռախոսահամար      | 1. <a href="mailto:kajaran2023eco@gmail.com">kajaran2023eco@gmail.com</a><br>2. +37494202387   |
| Պլանի էլեկտրոնային տարբերակը ներբեռնելու էլ. հասցե | <a href="http://Kajaran.am">Kajaran.am</a>   |

Պլանը կազմված է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի 25 հունվարի N 07-Լ հրամանի Հավելվածին համապատասխան: Պլանավորվում է միջհամայնքային համագործակցություններ, թափոնների կրճատման, իրազեկվածության բարձրացման ծրագրեր:

Սույն պլանը նպատակաուղղված է Քաջարան համայնքում ընդգրկված բնակավայրերի աղբահանության և կոշտ թափոնների կառավարման համակարգում ծառայությունների որակի գնահատման մեխանիզմների և ծառայությունների մատուցման վերահսկողության և մշտադիտարկման համակարգերի ներդրմանը:

ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման պլանը /այսուհետ՝ Պլան/ բխում է «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 4.4 -րդ հոդվածի դրույթներից: Պլանի կազմման անհրաժեշտությունը բխում է ոլորտում կիրառվող նոր մեթոդաբանության առկայությունից, որը կանոնակարգում է հանրապետության բնակավայրերում գոյացող աղբի հավաքման, տեղափոխման, պահպանման, տեղադրման /հեռացման/, վերամշակման ու օգտահանման գործընթացների պլանավորումն ու մշտադիտարկումը և սահմանում աղբահանության ու թափոնների կառավարման համար չափորոշիչները:

Պլանը նպատակ ունի ձևավորելու համապարփակ մոտեցում աղբահանության կառավարման ոլորտում, համակարգելու աղբահանության պլանավորումը տեղական ինքնակառավարման մարմիններում, ապահովելու նպաստավոր պայմաններ աղբահանության և կոշտ թափոնների կառավարման կայուն համակարգի ներդրման և թափոնների գործածության ամբողջական շղթայի գործարկման համար:

**1) ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵՍԼԱԿԱՆ**

Քաջարան համայնքն իր մեջ ներառում է 21 բնակավայր, որոնցից մեկը քաղաքային՝ Քաջարան քաղաք, 20-ը՝ գյուղական:

Համայնքում աղբահանությունն իրականացվում է «Քաջարանի կոմունալ տնտեսություն» փբը -ի կողմից Քաջարան քաղաքում և 20 գյուղական

բնակավայրերում՝ Անդոկավան, Աջաբաջ, Բաբիկավան, Գեղավանք, Գեղի, Գետիշեն, Լեռնաձոր, Կաթնառատ, Կավճուտ, Կարդ, Կիցք, Ձագիկավան, Ներքին Գիրաթաղ, Նոր Աստղաբերդ, Ոչեթի, Վերին Գեղավանք, Վերին Գիրաթաղ, Փուխրուտ, Քաջարանց, Քարուտ:

Քաջարան քաղաքում աղբահանություն իրականացվում է օրական 2 անգամ, գյուղական բնակավայրերում՝ շաբաթական 2-3 անգամ:

Համայնքի տնտեսական զարգացման, սոցիալական խնդիրների լուծմանն է միտված պլանավորման տարածքում աղբահանության և կոշտ թափոնների կառավարման տեսլականը և նպատակները համայնքի ուժեղ կողմերը համայնքային բյուջեի միջոցներն ինչպես նաև պետական կառույցների, հիմնադրամների, գործարարների և մասնավոր հատվածի ներդրումները: Հաշվի առնելով Քաջարան համայնքի աղբահանության ներկայիս իրավիճակը կատարվել է աղբահանության ներքին պոտենցիալի և արտաքին բարենպաստ ազդեցության, ինչպես նաև համայնքի թույլ կողմերի և համայնքից դուրս գտնվող բացասական ազդեցությունների վերլուծություն (SWOT վերլուծություն):

| <b>Քաջարան համայնքի աղբահանության SWOT վերլուծություն</b>  |  |
|--|--|
| <p><b>ՈՒՃԵՂ ԿՈՂՄԵՐ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Աղբահանության ծառայության առկայություն</li> <li>• Աղբահանություն իրականացնելու գրաֆիկի առկայություն</li> <li>• Աղբամանների առկայություն</li> <li>• Աղբատար մեքենաների առկայություն</li> <li>• Բնակչության կողմից վարձավճարների հավաքման բարձր մակարդակ</li> <li>• Նոր մտածելակերպի և բարեփոխումների նկատմամբ դրական վերաբերմունք համայնքապետարանի և աղբահանություն իրականացնող կազմակերպության կողմից</li> </ul> | <p><b>ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Համայնքն աշխատում է միջազգային կազմակերպությունների հետ</li> <li>• Միջհամայնքային համագործակցություններ</li> <li>• Համայնքային իշխանությունները գիտակցում են իրենց դերը և պատասխանատվությունը ծառայությունների որակի բարձրացման համար և ձեռնարկում են հնարավոր բոլոր միջոցները բնակիչների և ՏԻՄ -ի վարքագծի դրական փոփոխությունների համար</li> </ul> |
| <p><b>ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Բնակչությանը տեղեկացնելու մշտական և կանոնավոր միջոցները բացակայում են</li> <li>• Բնակչության անիրազեկությունը և մտածելակերպը թափոնների</li> </ul>  | <p><b>ՎՏԱՆԳՆԵՐ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ճանապարհների շահագործման սեզոնային դժվարություններ</li> <li>• Աղբահանությանը վերաբերող ազգային օրենսդրական բարեփոխումների պակաս՝ նորմերի,</li> </ul>   |

|  |   |
|--|---|
| <p><b>տեսակավորման և վերամշակման բնագավառում թերի է</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Աղբահանության աշխատաշուկան գրավիչ չէ, ուստի վարձու աշխատողներ գտնելը բավականին դժվար է</li> <li>• Աղբավայրի բացակայություն</li> <li>• Համայնքի տեղանքը կտրտված է</li> </ul> | <p>Նորմատիվների բացակայություն</p> <ul style="list-style-type: none"> <li>• Միջազգային կազմակերպությունները մատնանշում են կոմբինատի առկայությունը և ինչ որ չափով ֆինանսապես խուսափում են աջակցել</li> <li>• Աղբավայրի բացակայություն</li> </ul> |
|--|---|

## 2) Պլանավորման տարածքի բնութագիրը

Պլանավորման տարածքը Քաջարան համայնքն է մեկ քաղաքային և 20 գյուղական բնակավայրերով:


### ա) պլանավորման տարածքի նկարագրություն

|                                 | Ընդհանուր տարածքը | Քաղաքային | Գյուղական | Արդյունաբերական | Գյուղատնտեսական | Կանաչ, անտառային |
|---------------------------------|-------------------|-----------|-----------|-----------------|-----------------|------------------|
| Տարածքը /հա/                    | 58210,2           | 46762     | 11450     | 1252,86         | 29538,65        | 8686,64          |
| Տարածքը տոկոսով ընդհանուրից /%/ | 100               | 80.32     | 19.68     | 2.15            | 50.74           | 14,92            |

### բ) Ժողովրդագրական տեղեկություններ

| Գրանցված բնակչություն /մարդ/ | Փաստացի բնակվող /մարդ/ | Տնտեսությունների թիվը | Բազմաբնական շենքերի թիվը | Բնակարանների թիվը |
|------------------------------|------------------------|-----------------------|--------------------------|-------------------|
| 2023                         | 8145                   | 606                   | 75                       | 2140              |

## գ) Աշխարհագրական սահմանները



## Կոշտ թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակը և քանակը

| Թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակները                                | Քանակը | Նշումներ |
|--|--------|----------|
| Բնակելի նպատակային նշանակության շինություններ                                |        |          |
| Բազմաբնակարան բնակելի շենքեր   | 75     |          |
| Անհատական բնակելի տներ   |        |          |
| Ոչ բնակելի նպատակային նշանակության շինություններ                             |        |          |
| Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շինություններ | 128    |          |

|  |    |  |
|--|----|--|
| Հյուրանոցային և հյուրատնային տնտեսություններ, սպորտի համար նախատեսված, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների շինություններ | 21 |  |
| Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շինություններ                         | 13 |  |
| Արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շինություններ   | 12 |  |
| Գիտակրթական, մշակութային և գրասենյակային նշանակության շինություններ  | 12 |  |
| Շինություններ, որտեղ իրականացվում է մեկից ավելի, առանձնացված տնտեսական գործունեություն                                 |    |  |

### 3) Թափոնների քանակ և բաղադրություն

Աղբահանության պլանավորման շրջաններում հատկապես գոյացող թափոնների քանակի նվազեցման, տեսակավորման, վերամշակման, օգտահանման ծրագրեր և միջոցառումներ մշակելիս ու նախատեսելիս՝ առանձնապես կարևոր է թափոնների քանակի և բաղադրության որոշումը:

#### ա. Գոյացող թափոնների քանակի ցուցանիշները Քաջարան համայնքի համար

- Մեկ տարում գոյացող թափոնների ընդհանուր զանգվածը (տոննա/տարեկան) 891.9 տոննա/տարի
- Մեկ տարում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (մարդ/կգ/տարի)
- 109.5 կգ/մարդ/տարի
- Մեկ օրում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (մարդ/կգ/օր)՝ 0.3 մարդ/կգ/օր

Բաղադրությունն ընդունված է ներկայացնել տոկոսով՝ ըստ յուրաքանչյուր բաժնեմասի ընդհանուր զանգվածի չափաբաժնի:

#### բ. Թափոնների բաղադրության հիմնական տեսակները/հոսքերը

- **Կոշտ կենցաղային թափոն**՝ աղբամաններում կուտակվող կոշտ կենցաղային թափոն՝ «Թափոնների մասին» ՀՀ օրենքով սահմանված թափոն,
- **Խոշոր եզրաչափի թափոն**՝ 1 խմ և ավել ծավալով թափոն, որը չի տեղադրվում աղբամանում,
- **Շինարարական աղբ**՝ քաղաքաշինական և շինարարական գործունեության հետևանքով առաջացող աղբ,



- **Փաթեթավորման թափոն՝** կոմերցիոն գոտում գոյացող փաթեթավորման թափոն
- **Էլեկտրական և էլեկտրոնային թափոն (ԷԷՍ)՝** չշահագործվող սարքավորում, որը սնուցվում է էլեկտրական ցանցից կամ մարտկոցից,
- **Պարտեզային թափոն՝** այգիների, պուրակների և այլ կանաչ տարածքներից հավաքված թափոն, այդ թվում՝ էտման թափոն, տերևներ և այլ նմանատիպ թափոն,
- **Վտանգավոր թափոն՝** (բացի ԷԷՍ թափոնից)՝ ներկեր, քիմիկատներ, դյուրավառ նյութեր, բժշկական թափոն և այլն:

#### **4) Թափոնների գործունեություն**

Աղբահանության կառավարման համակարգում պլանավորում իրականացնելիս կարևոր է հստակ պատկերացում ունենալ թափոնների գործունեության բոլոր փուլերի մասին՝ թափոնի առաջացումից մինչև վերամշակման կամ օգտահանման արյունքում երկրորդային օգտագործում կամ վերացում/ոչնչացում կամ տեղադրում աղբավայրում, յուրաքանչյուր հաջորդական փուլում թիրախ սահմանելու հնարավորություններն ու խոչընդոտները վերլուծելու նպատակով:

| Թափոնի տեսակ                          | Աղբի գոյացում 1 շնչի հաշվով<br>կգ/տարի/մարդ | Աղբի տարեկան գոյացում<br>Տոննա/տարի | Թափոնների գործունեության ձևերը              |   |  |   |  |   |   |          |
|---------------------------------------|---|-------------------------------------|---|---|--|---|--|---|---|----------|
|                                       |   |                                     | I<br>Խառը հավաքում<br>(% ընդհանուր քանակից) | II<br>Տեսակավորված<br>հավաքում<br>(% ընդհանուր քանակից) | III<br>Վերօգտագործում/վրկնօգ<br>տագործում<br>(% ընդհանուր քանակից) | IV<br>Վերամշակում կամ<br>օգտագործում<br>(% ընդհանուր քանակից) | V<br>Վտանգավոր<br>թափոնների չեզոքացում/<br>վնասագերծում<br>(% ընդհանուր քանակից) | VI<br>Տեղադրում ոչ<br>սանիտարական<br>աղբավայրում<br>(% ընդհանուր քանակից) | VII<br>Տեղադրում սան.<br>աղբավայրում<br>(% ընդհանուր քանակից) | Նշումներ |
| Կոշտ կենցաղային<br>թափոն              | 109.5                                       | 891.8                               | 100   |   |  |   |  |   | 100   |          |
| Խոշոր եզրաչափի<br>թափոն               | 30  | 241                                 | 100   |   |  |   |  |   | 100   |          |
| Շինարարական<br>աղբ                    | 1.3   | 10.4                                | 100   |   |  |   |  |   | 100   |          |
| Փաթեթավորման<br>թափոն                 | 4   | 32                                  | 100   |   |  |   |  |   | 100   |          |
| Էլեկտրական և<br>էլեկտրոնային<br>թափոն |   |                                     | 100   |   |  |   |  |   | 100   |          |

**բ. Աղբահանության և կոշտ թափոնների հետ գործունեություն**

➤ **Աղբահանության և կոշտ թափոնների հավաքում**



Քաջարան համայնքում աղբի հավաքումը կատարվում է՝

- Փողոցներում և բակերում տեղակայված աղբամաններից
- Բնակելի տներից և կազմակերպություններից գրաֆիկով
- Ինքնափախադրմամբ՝ երբ թափոն գոյացնոցը կազմակերպում է իր գոյացրած թափոնի փոխադրումը

| Թափոնների հավաքման մեթոդ | Ծառայությունից օգտվող բնակչություն % | Տեսակավորված հավաքում (տոննա) | Տեսակավորված հավաքում % | Չտեսակավորված հավաքում (տոննա) | Չտեսակավորված հավաքում % | Նշումներ |
|--------------------------|--------------------------------------|-------------------------------|-------------------------|--------------------------------|--------------------------|----------|
| Աղբամաններից             | 100 %                                | -                             | -                       | 891.8                          | 100%                     | -        |

➤ **Աղբահանություն իրականացնող օպերատորներ**

| Օպերատորի անվանումը                  | Սպասարկուղ համայնքներ/ Բնակավայրեր | Սպասարկվող տարածքի բնակչության թիվը | Օպերատորի աղբատար մեքենաների թիվը | Օպերատորի աղբատար մեքենաների տեսակը / տարադրությունը (բաց/փակ թափքով, կոմպակտոր և այլն) | Հավաքվող թափոնների տեսակները/ հառը, տեսակավորված պլաստիկ, թուղթ... շինարարական և այլն համաքում | Օպերատորի աշխատանքի գնահատական |
|--------------------------------------|------------------------------------|-------------------------------------|-----------------------------------|---|--|--------------------------------|
| «Քաջարանի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ | Քաջարան                            | 8145                                | 2                                 | XCMG  | Խառը   | Լավ                            |
|                                      | Անդոկավան,                         |                                     |                                   | KAMA3 K0440-6   | Խառը   | Լավ                            |
|                                      | Աջաբաջ,                            |                                     |                                   | KAMA3 K0440-6   | Խառը   | Լավ                            |
|                                      | Բաբիկավան,                         |                                     |                                   | KAMA3 K0440-6   | Խառը   | Լավ                            |
|                                      | Գեղավանք,                          |                                     |                                   | KAMA3 K0440-6   | Խառը   | Լավ                            |
|                                      | Գեղի                               |                                     |                                   | KAMA3 K0440-6   | Խառը   | Լավ                            |
|                                      | Ներքին Գիրաթաղ,                    |                                     |                                   | KAMA3 K0440-6   | Խառը   | Լավ                            |
|                                      | Նոր Աստղաբերդ,                     |                                     |                                   | KAMA3 K0440-6   | Խառը   | Լավ                            |
|                                      | Ոչեթի                              |                                     |                                   | KAMA3 K0440-6   | Խառը   | Լավ                            |
|                                      | Վերին Գեղավանք                     |                                     |                                   | KAMA3 K0440-6   | Խառը   | Լավ                            |
|                                      | Վերին Գիրաթաղ                      |                                     |                                   | KAMA3 K0440-6   | Խառը   | Լավ                            |
|                                      | Փովսրուտ,                          |                                     |                                   | KAMA3 K0440-6   | Խառը   | Լավ                            |
|                                      | Քաջարանց                           |                                     |                                   | KAMA3 K0440-6   | Խառը   | Լավ                            |
|                                      | Քարուտ                             |                                     |                                   | KAMA3 K0440-6   | Խառը   | Լավ                            |
|                                      | Գետիշեն                            |                                     |                                   | KAMA3 K0440-6   | Խառը   | Լավ                            |
|                                      | Լեռնաձոր                           |                                     |                                   | KAMA3 K0440-6   | Խառը   | Լավ                            |

|  |           |  |  |               |      |     |
|--|-----------|--|--|---------------|------|-----|
|  | Կաթնառատ  |  |  | KAMA3 K0440-6 | Խառը | Լավ |
|  | Կավճուտ   |  |  | KAMA3 K0440-6 | Խառը | Լավ |
|  | Կարդ      |  |  | KAMA3 K0440-6 | Խառը | Լավ |
|  | Կիցք      |  |  | KAMA3 K0440-6 | Խառը | Լավ |
|  | Ձագիկավան |  |  | KAMA3 K0440-6 | Խառը | Լավ |

Վերոնշյալ մեքենաները միաժամանակ օգտագործվում են փողոցներից և կանաչապատ տարածքներից գոյացած ավելվածքի տեղափոխման համար: Բոլոր մեքենաներն աշխատում են դիզ. վառելիքով: Ներկայումս առկա են 157 (1,1խ.մ) մեծ և 220 (0,025) փոքր աղբարկղեր: Աղբարկղերը տեղակայված են բանուկ վայրերում, դպրոցների, ԲԲՇ-ների հարևանությամբ:

Համայնքում թափոնների վերօգտագործում չի իրականացվում:

➤ **Աղբի տեղափոխման սխեմաներ**

| Թափոնի տեսակը         | Հեռավորությունը մինչև աղբավայր, կմ | Հեռավորությունը մինչև փոխաբեռնման կայան, կմ | Հեռավորությունը մինչև տեսակավորման կենտրոն, կմ | Հեռավորությունը մինչև այլ գործածության կայանք / վերամշակման գործարան և այլն/ կմ | Նշում<br>ինքնափոխադրման մասին |
|-----------------------|------------------------------------|---|--|---|-------------------------------|
| Կոշտ կենցաղային թափոն | 37.5                               |   |  |   |                               |
| Շինարարան աղբ         | 37.5                               |   |  |   |                               |

➤ **Աղբավայր և աղբանոցներ**

| Աղբավայր /գտնվելու վայրը/ | Շահագործող համայնքներ /բնակավայրեր | Աղբավայրի մակերես, հա | Տեղադրվող աղբի տեսակը                  | Ստեղծման իրավական հիմք /որոշման համար, ամսասթիվ/ | Սեփականության/ օգտագործման իրավունք | Շահագործողի անվանում                         | Աղբի տեղադրման վճարը/ ՀՀ դրամ/ տոննա | Դեպի աղբավայր տանող մուտքի ճանապարհահատվածի վիճակը |
|---------------------------|------------------------------------|-----------------------|--|--|-------------------------------------|--|--------------------------------------|--|
| Կապան                     | Կապան համայնք                      | 14 հա                 | Կոշտ կենցաղային թափոն, շինարարական աղբ |  |                                     | «Կապան համայնքի կրմունայլ ծառայություն» ՀՈԱԿ |                                      | Լավ  |

|  |                 |  |  |  |  |                                      |  |  |
|--|-----------------|--|--|--|--|--------------------------------------|--|--|
|  | Քաջարան համայնք |  | Կոշտ կենցաղային թափոն, շինարարական աղբ |  |  | «Քաջարանի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ |  |  |
|--|-----------------|--|--|--|--|--------------------------------------|--|--|

➤ **Պատասխանատվության փաստացի բաշխում**

Աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման պլանի արդյունավետ իրականացման պատասխանատուն Քաջարան համայնքի կողմից հիմնադրված «Քաջարանի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ -ն է, որը իրականացնում է թափոնների խառը հավաքում (100%), տեղափոխում (100%):

Թափոնների հիմնական տեսակների կառավարման համապատասխան փուլում ներգրավված դերակատարներն են՝

- ՏԻՄ
- Մասնավոր հատված /ՄՀ/
- Բնակչություն /Բն/
- Քաղաքացիական հասարակական կազմակերպություն /Քկ/
- արտադրողի ընդլայնված պատասխանատվություն / ԱԸՊ/:

| Պատասխանատուներ               | Իրազեկություն բարձրացում /%/ | Խառը հավաքում | Տեսակավորում հավաքում | Տեղափոխում | Տեսակավորում /գործարանային / | Վերաօգտագործում /կրկնօգտագործում/ | Վերամշակում և/կամ օգտահանում | Վտանգավոր թափոնների վնասագերծում/վերացում /%/ | Տեղադրում աղբավայրում |
|-------------------------------|------------------------------|---------------|-----------------------|------------|------------------------------|-----------------------------------|------------------------------|---|-----------------------|
| ՏԻՄ                           | 50                           | 100           | 20                    | 80         |                              |                                   |                              |   |                       |
| Մասնավոր հատված               |                              |               | 10                    | 10         |                              | 10                                |                              |   | 100                   |
| Արտադրող                      |                              |               | 30                    | 10         |                              | 50                                |                              |   |                       |
| Բնակչություն                  |                              |               |                       |            |                              | 20                                |                              |   |                       |
| Քաղաքացիական կազմակերպություն | 50                           |               | 40                    |            |                              |                                   |                              |   |                       |

➤ **Անձնակազմի կարողությունների գնահատում**

Արդյունավետ պլանավորման համար կարևոր է հստակ գնահատել Աղբահանության և կոշտ թափոնների տեղական կառավարման մեջ ներգրավված տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան անձնակազմի կարողություններն ըստ հմտությունների մակարդակի /աղյուսակը՝ ստորև/: Վերլուծությունը հիմք կհանդիսանա պլանավորման զարգացմանն ուղղված միջոցառումների և նպատակների մշակման համար:

| Հմտություն/ոլորտ                     | Համապատասխան գիտելիքներ ու հմտություն ունեցող աշխատակիցների թիվը | Գիտելիքների ու հմտությունների ներկայիս մակարդակ / 1-շատ ցածր, 2-ցածր, 3- միջին, 4-բարձր, 5-գերազանց/ | Նշումներ |
|--------------------------------------|--|--|----------|
| Թափոնների կառավարման գիտելիքներ      | 4  | 3  |          |
| ՀՀ օրենսդրության իմացություն         | 5  | 3  |          |
| Տվյալների հավաքագրում                | 5  | 3  |          |
| Համակարգչային քարտեզագրում           | 0  |  |          |
| Գնումների կազմակերպում               | 0  |  |          |
| Պայմանագրերի կառավարում              | 1  | 3  |          |
| Գործառնական հմտություններ            | 1  | 3  |          |
| Ֆինանսական վերլուծության իմացություն | 1  | 4  |          |

### 5) ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Թափոնների կայուն կառավարում ապահովելու համար կարևոր նախապայման է ինչպես բնակչության, այնպես էլ կառավարման համար պատասխանատու անձնակազմի իրազեկվածության աստիճանը:

Պատասխանատուների իրազեկվածությունը կարևոր է Պլանը մշակելիս խնդիրները ճիշտ գնահատելու, լուծման առաջնահերթությունները հստակ սահմանելու և հետևողականորեն իրականացնելու համար:

Բնակչության իրազեկվածությամբ պայմանավորված են սկզբնաղբյուրում թափոնների առաջացումը նվազագույնի հասցնելու, տեսակավորված հավաքելու, վերօգտագործելու հաջողությունները՝ հետևապես և Պլանի իրականացման հաջողությունը:

Իրազեկվածության աստիճանը գնահատելու համար անհրաժեշտ է բնակչության տարբեր սոցիալական խմբերում, տարբեր գործունեություն իրականացնող տնտեսվարողների և Պլանի մշակման և իրականացման համար պատասխանատու անձնակազմի շրջանում հարցումներ իրականացնել՝ նախապես մշակված հարցաշարով: Հարցաշարերը պետք է ուղղված լինեն թափոնների կառավարման խնդիրների վերաբերյալ առկա գիտելիքների աղբյուրների, տեղեկացվածության, վերաբերմունքի և ակնկալիքների, ինչպես նաև թափոնների կառավարման առկա իրավիճակից բնակիչների և տնտեսվարողների գոհունակության աստիճանի գնահատմանը, ինչպես նաև պարունակեն տեղեկություններ այն լրացնողի/հարցվողի տարիքի, կրթության, մասնագիտության, զբաղվածության/աշխատավայրի վերաբերյալ: Հարցաշարում կարող են ներառվել նաև այլ հարցեր:

Հարցման արդյունքները պետք է հիմք հանդիսանան Պլանում իրազեկվածության բարձրացման ծրագրերի նախատեսման, դրանց թիրախների սահմանման համար: Հարցմանը մասնակցել է Քաջարան համայնքի 50 բնակիչ:

| Հարցեր   | Իրազեկվածության / գոհունակության աստիճան/1-շատ ցածր, 3-միջին, 4-բարձր, 5 գերազանց/ | Նշումներ /առաջարկություններ |
|--|--|-----------------------------|
| 1. Թափոններ կառավարման վերաբերյալ առկա գիտելիքների աղբյուրներ    | 3  |                             |
| Կրթության տարբեր աստիճաններ /նախադպրոցական, դպրոցական, բուհական/ | 3  |                             |
| Սոցիալական գովազդներ   | 3  |                             |
| Պաշտոնական տեղեկատվություն ՋԼՄ-ներով                             | 3  |                             |
| Քաղաքացիական կազմակերպությունների գործունեությունը               | 3  |                             |

|   |   |  |
|---|---|--|
| 2. Թափոնների կառավարման վերաբերյալ տեղեկացվածություն            | 4 |  |
| Թափոնների թերի կառավարման բնապահպանական ազդեցությունները        | 3 |  |
| Թափոնների թերի կառավարման սոցիալական ազդեցությունները           | 3 |  |
| Թափոնների փերի կառավարման տնտեսական ազդեցությունները            | 2 |  |
| Թափոնների հիերարխիայի իմացություն                               | 3 |  |
| Օրենսդրության խրախուսող գործիքներ                               | 2 |  |
| Օրենսդրության պատժիչ գործիքներ                                  | 3 |  |
| Թափոնների կառավարման ոլորտում իրականացվող բնապահպանական ծրագրեր | 3 |  |
| 3. Թափոնների կայուն կառավարման վերաբերմունք և ակնկալիքներ       | 3 |  |
| Թափոնների կայուն կառավարման կարևորությունը                      | 3 |  |
| Թափոնների տեսակավորման օգուտները                                | 3 |  |
| Իրազեկվածության արշավների օգուտները                             | 4 |  |
| 4. Բանակիչների և տնտեսվարողների գոհունակություն                 | 3 |  |
| Աղբամանների տեղեկայվածություն                                   | 3 |  |
| Աղբամանների վիճակ   | 3 |  |
| Չտեսակավորված թափոնների համաքման հաճախականություն               | 4 |  |
| Տեսակավորված թափոնների հավաքում                                 | 4 |  |
| Համայնքի սանիտարական վիճակ                                      | 4 |  |
| Աղբահանության վճար  | 4 |  |
| Մատուցված ծառայությունների ընդհանուր վիճակը                     | 3 |  |



6) Ֆինանսավորում և բյուջե

ա. Աղբահանության եկամուտների և ծախսերի ընդհանուր նկարագիր

| Տարի | Փաստացի բնակչության թիվ | Աղբահանության սահմանված վարձավճարը, դրամ/անձ | Գործող տնտեսվարվող սուբյեկտների թիվը | Աղբահանության համակարգում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների թիվը/աղբահանության պայմանագիր/ | Վարձավճարների հավաքման ընդհանուր ծախսեր, դրամ/տարի | Աղբի հավաքման և տեղափոխման ծախս, դրամ/տարի | Աղբավայրում աղբի տեղափոխման ծախս դրամ/տոննա |
|------|-------------------------|--|--------------------------------------|--|--|--|---|
| 2023 | 8145                    | 250  |                                      | 142  | 7678619  | 79019860                                   |   |
|      |                         |  |                                      |  |  |  |   |
|      |                         |  |                                      |  |  |  |   |

## Բ. Հավաքագրում և ծախսեր

| Տարի                   | Եռամսյակ | Աղբահանության եկամուտ/հավաքագրում |                 |       |                        |                 |       | Եկամուտ վերամշակման ենթակա թափոնների վաճառքից | Աղբահանության ծախս |                 | Սանիտարական մաքրման ծախս |      |
|------------------------|----------|-----------------------------------|-----------------|-------|------------------------|-----------------|-------|---|--------------------|-----------------|--------------------------|------|
|                        |          | Բնակչություն                      |                 |       | Տնտեսվարող սուբյեկտներ |                 |       |   | Պլան               | փաստ            | Պլան                     | Փաստ |
|                        |          | Պլան                              | Փաստ            | %     | Պլան                   | Փաստ            | %     |   |                    |                 |                          |      |
| <b>2021</b>            | 1-ին եռ  | 4533750                           | 4681884         | 103,3 | 8040468                | 7208380         | 89,7  |   |                    | 14980208        | 11877756                 |      |
|                        | 2-րդ եռ  | 4533750                           | 4262425         | 94,0  | 9480536                | 9315682         | 98,3  |   |                    | 16448443        | 11948994                 |      |
|                        | 3-րդ եռ  | 4562000                           | 4189625         | 91,8  | 9496080                | 8380440         | 88,3  |   |                    | 15072906        | 7828530                  |      |
|                        | 4-րդ եռ  | 4530500                           | 4925475         | 108,7 | 8801560                | 10953755        | 124,5 |   |                    | 16614570        | 6136891                  |      |
| <b>Տարեկան 2021 թ.</b> |          | <b>18160000</b>                   | <b>18059409</b> | 99,4  | <b>35818644</b>        | <b>35858257</b> | 100,1 |   |                    | <b>63116127</b> | <b>37792171</b>          |      |
